ეროვნული ბიბლიოთეკა

№ 32 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 12 ՓԵՏՐՈՒԱՐԻ — ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 12 ՓԵՏՐՈՒԱՐԻ № 32

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամէն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ

Յայտարարութիւններն ընդունւում են ամէն լեզուով՝ առաջին երեսում 75 կոպ., իսկ վերջին երեսում՝ 50 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 15 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունւում են մինչև ժամը 2-ը։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1919 թ.
ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ
ՕՐԱԹԵՐԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-ԻՑ ՆՈՐ, ՄԵԾԱՑՐԱԾ ԴԻՐՔՈՎ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է.

1 ամիսը	10 ռուբ.
3 »	25 »
Հատավաճառ	70 կոպ.

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 25.

Գրասենեակը բաց է ամէն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 10—99.

Ա.Զ.Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ. ՊԱՐԵՆԱՒՈՐՄԱՆ ՄԻՆԻՍՏ.

յայտարարում է ի գիտութիւն, որ ՊԱՐԵՆԻ ամէն տեսակ առարկաների ներմուծումն Արտասահմանից Հայաստանի Հանրապետութեան սահմաններում բոլորովին ազատ է ռեկվիզիցիայից և վաճառումն ազատ արգելքներից։

2—2 Պարենաւորման մինիստ. պաշտօնակատար՝ Ս. Ցառուքեան

ՓՆՏՐՈՒՄ ԵՄ ամուսնուս՝ ԽԱՉԻԿ ՃԱՎԱՀԻՐՃԵԱՆՑԻՆ,

որը յունուարի 1-ին ձերբակալուել է որպէս Հայաստանի հպատակ, ուղարկուել է Քութայիս և մինչև այժմ անհետ կորած է։ Տեղեկութիւնները հաղորդել՝ Петхаинская ул. Успенскій пер. № 3, Гарандземъ Джаваирджянцъ. 2—2

Բ Ժ Ի Շ Կ
ԴՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Նախկին ասիստենտ Ժընեւի համալսարանի կլինիկաների և պրոֆես. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բաժանմանի։
ՆԵՐՔԻՆ և ԿԱՆԱՆՑ հիւանդութիւն. մասնագէտ ՎԵՆԵՐԱԿԱՆ (ՍԻՖԻԼԻՍ, ներարկումն «606»-ի և «914»-ի), ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ (ՀԻՆ և ՆՈՐ ՏՐԻՊԵՐ և նրա կոմպլեկացիաները) և ԿԱՇՈՒԻ ցաւերի։
Էլեկտրաբուժական կաբինետ
Ընդունելութիւնն ամէն օր, առաւ. ժ. 10-ից 1-ը, երեկ. 4-ից 6-ը։ Կիրակի օրերը միմիայն ժ. 12-ից 1-ը։ Կիրոչնայա, № 11։ 100—35

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ
Նախկին ասիստենտ Բեռլինի եւ Մոսկուայի համալսարանների կլինիկաների։ Մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտի և սրտի. ընդունելութիւնը՝ իր ռենտգենեան և լոյսի ու էլէկտրօբուժական կաբինետում։ Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։ Ամէն օր, 9—1 և 5—8 ժամը երեկ. Բեհբուտովսկայա փ., № 23։ Հեռ. 7—92։ 100—45

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(Նախկին Դաւոս սանատորիայի ասիստենտ)։
Ներքին և երեխայոց հիւանդութիւնների մասնագէտ, թոքերի և սրտի հիւանդ.։ Ընդունելութիւնը ամէն օր երեկոյեան ժամը 5—7-ը։ Սոլոլակ, Թոփչեանայա 3, հեռ. 16—69։ ա. օ.) 100—35

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

(Թիւրքիայի թերթերից)

Աւելի և աւելի են բարձրանում ու բազմանում ձայները, որոնք դատի են հրաւիրում, արդարութեան առաջը հանել են պահանջում՝ անլսելի կոտորածների և անգթութիւնների հեղինակներին Հայաստանում։ Մեղադրում են գրեթէ բոլոր նահանգապետներն ու գաւառապետները, ամէն տեղի իթթիհաթական պետերն ու «չեթեբաշիներ» (չեթաների պետերը), մէջ տեղ են բերում այս ու այն գաւառի գործակալները և դրդիչները, կոտորած սարքողների մի ամբողջ բանակ է երևան հանում՝ արիւնաթաթախ և վայրագ, որոնք սոսկումներ են գործել գաւառներում իրենց աւազակային խմբերով, որոնք թալանել են, արեան լճեր գոյացրել, աւերակ դարձրել թաղեր ու գիւղեր…

Այդ բաւական չէ, այժմ արդէն Թիւրքիայի բոլոր թերթերը, մի առ մի, սկսել են համառօտ տեղեկագրեր հրատարակել այս և այն վայրերի մէջ տեղի ունեցող կոտորածների. այդ տեղեկագրերը կազմուած են քննիչի չոր, բայց զարհուրելի անկողմնակալութեամբ, հեղինակների անունները տալով, դէպքերը մանրակրկիտ նկարագրելով…

Իբր նմուշ առա՝ Կ. Պոլսի մի ֆրանսերէն թերթում հրատարակած հետևեալ տեղեկագիրը Սւազի կոտորածի մասին, քաղած «Ժողովուրդ» թերթից *).

Սւազի ողբերգութիւնը

«1915 թուի, յունիս 3-ին, կէսօրուայ մօտերը, յանկարծ քաղաքի շուկան գրաւեցին հարիւրաւոր ոստիկաններ և սկսեցին ձերբակալել պատահած բոլոր հայերին։ Յետոյ՝ փակեցին հայերի բոլոր խանութները, բանալիները յանձնեցին ոստիկանատուն, իսկ ձերբակալուածներին առաջնորդեցին քաղաքի բանտը։ Օրը չորեքշաբթի էր։

Մինչև կիրակի իրիկնադէմին, առանց դադար տալու և հանգստանալու՝ շարունակեցին որսնել և հաւաքել բոլոր նրանց, որոնք թաքնուել էին, կամ փախել ծածկուել էին շրջակայքներում։ Յունիս 10-ի առաւօտեան ժանդարմները լցուեցին բոլոր հայերի տները, ժողովեցին կանանց, ծերունիներին և մանուկներին։ Յետոյ, նրանցից մի հօտ կազմեցին և քաղաքից դուրս տարան։ Այնտեղ մի քանի խմբերի բաժանեցին և յայտնեցին, որ պիտի ուղարկուէին դէպի Մոսուլ.

Սակայն, հազիւ այդ կարաւանները հեռացել էին քաղաքից, «չեթաների» մի խումբ, որ կազմուած էր Սւազի Վալի Մուամմէր բէյի անմիջական հսկողութեամբ, նրանց ճանապարհը կտրեց։ Այդ խմբին առաջնորդում էին Էմիր փաշայի որդի Համիդ բէյը և ոստիկանութեան պետ՝ Մահմուդ բէյը։

Խումբը անմիջապէս սկսեց կողոպտել կանանց վրայ եղած բոլոր ակնեղէնները. յետոյ, սկսեցին դրամները, մինչև յետին փարան, խլել ամէնքի մօտից։ Թալանը առանց վայրագ տեսարանների չանցաւ։ Մի յղի կնոջ վզից մանեակը կորզելուց յետոյ, փորը պատռեցին (éventrer)։ Մի ուրիշին, որին կասկածում էին թէ կուլ էր տուել ոսկիներ, որպէսզի կողոպտել չտար—ստամոքսը պատռեցին (ouvrait l'estomac) և «դողացուած» ոսկիները որոնեցին։ Այս գործը վերջացնելուց յետոյ, առաւ մանուկներին, 10—12 տարեկանից վեր, այլ և ծերուններին, զատեցին, տարան մի քանի քայլ հեռու և առանց բացառութեան, բոլորին էլ մորթոտեցին։ Մնացողներից նորէն խմբեր կազմեցին և ժանդարմների հսկողութեամբ, սւիններ ու ատրճանակների սպառնալիքով, մղուեցին դէպի անապատը…

«Տղամարդկանց, որոնց ձերբակալել էին սկզբում և փակել քաղաքի բանտի մէջ, 200—300-ական խմբերի բաժանեցին և ժանդարմների հսկողութեամբ, հրամանատարութեամբ վալի Մուամմէր բէյի օգնական Ջելալ բէյի, տարան Սւազից 3 ժամ հեռու, Արհեստական դպրոցի մօտ գտնուող մի ագարակ։

Այնտեղ էին ժողովուել արդէն «Միութիւն և Յառաջդիմութիւն» կուսակցութեան (Իթթիհատի) գլխաւոր անդամները—կոմիտէի մշտական քարտուղար Դանի բէյ, Շէքիր Օղլու Խամդի, Հալիտ բէյ, Ալի բէյը, որ Մուամմէր բէյի մտերիմ խորհրդականն էր, միւդիր Աղջա Կիշլա և դարդա գիւղեր Հասան (այս վերջին երկուսը աւերեցին յատկապէս Բուրհան, Կաբաքեոյ և Ջէկանի գիւղերը)։ Կային նոյնպէս 1895-ի կոտորածների մի քանի հերոսները — Արհեստական դպրոցի տեսուչ Զիա էֆենդի, Հայրի բէյ—«Իշ-Իւրդու» կոչուող կլուբի տեսուչը, «Սուլթանիէ» դպրոցի տեսուչ Քեամիլ էֆենդի և դեռ ևս ուրիշներն էլ։ Մի քանիսը նշանակուած էին՝ հսկելու «գործողութեան», իսկ միւսներին յանձնել էին կոտորածը… Եւ ջարդը սկսուեց… Մինչև այժմ էլ դեռ դիզուած մնում են այնտեղ հազարաւոր գանգերի ոսկրոտիքը, որպէս վկայ զարհուրելի նախճիրին։

«Այնուհետև, դեռ երկար ժամանակ յետոյ, տնավաճառների մէջ ու շուկաներում ծախու էին բերում արիւնաթաթախ շալվարներ, դաշոյնի հարուածներով ծակուած բաճկոններ, գնդակներով պատառոտուած վերարկուներ… Առանց քաշուելու, նոյն իսկ որոշ հպարտութիւններով էր, որ ծախու էին հանում այդ զարհուրելի մնացորդները։

«Սակայն վերոյիշեալ ագարակը միայն Սւազի զոհերը չէր որ պիտի տեսնէր։ Կեսարիայից, Թոքատից, Ամասիայից, Մերզիֆոնից, Սիվերեգից, Օրդուից բերուած կարաւանները այնտեղ էին բերում ու մորթոտում։ Կենտրոնացման կէտն էր ըստ երևոյթին և միաժամանակ՝ վերջակէտը (le point terminus)։ Իւրաքանչիւր մարդկային կարաւան, որ հասնում էր Սւազ՝ Փոքր Ասիայի զանազան կողմերից, միայն մի գիշեր էր անցկացնում այդ քաղաքի մէջ։ Հետևեալ առաւօտը վաղ՝ քշում էին նրանց դէպի արիւնոտ ագարակը»… (Renaissense» № 11)։

Ահա բոլորը։ Պատմուած անպաճոյճ կերպով և սակայն սոսկալի ճշտութեամբ։

Եւ ինչպէս այլ ևս յանդգնութիւն ունենալ, կարդալով այդ տեղեկագրերը, որոնք մի առ մի տպւում են Պոլսի թերթերի մէջ թիւրք պատերազմ. գրաքննիչի նախնական թոյլտուութեամբ նոյնիսկ—ինչպէս սիրտ ունենալ շարունակելու այն յանկերգը, թէ «պատերազմական հարկադրական պահանջներն» էին պատճառը այդ սոսկումների և թէ վերջապէս «թեթև բաներ» են եղել դրանք» և այլն և այլն։

Յանկերգ, որ երկար հնչեցնել ջանացին նախ բոլոր թիւրք թերթերը, բայց այժմ, վերջ ի վերջոյ, երբ ժողովւում են բոլոր զարհուրելի փաստերը, երբ Մաղհար բէյի պէս դատուելու արժանի դատաւորներն անգամ ոչ մի միջոց չեն գտնում ծածկելու տեղի ունեցած լայնածաւալ, անորակելի և աննախընթաց ոճիրները—թիւրք թերթերը այլևս խոստովանում են և ընդունում, թէ, յիրաւի, «մեր հայ հայրենակիցների դէմ մեծագոյն մի ոճիր գործուեց»։

Բայց… Կայ մի մեծ «բայց», որ միշտ գոյութիւն է ունեցել հայկական բոլոր կոտորածներից յետոյ, երբ Եւրոպայի հասարակական կարծիքը սկսել է վրդովուել թափուած արիւնից և կամ երբ, որև է պետութիւն, իր քաղաքական նպատակների համար, մտածել է փոքր ինչ խիստ լեզուով խօսել Թիւրքիայի հետ։ Բայց… կրկնում ենք, ի՞նչ երաշխիք, որ ապագայում նոյնը չի կրկնուելու, երբ և եթէ, դարձեալ, քաղաքական այս ու այն իրադարձութեան շնորհիւ երբ Հայաստանը էլի մնայ խաղալիք չորս քամիների մէջ տեղ…

Ի՞նչ երաշխիք, յիրաւի,—հարց է տալիս Պոլսահայ թերթերն է—ինչ գրաւական, որ ապագայ կրկնութիւնները տեղի չեն ունենալու։ «Հայկական հարցին լուծման մէջ՝ միակ համար հիմնական տեսակէտ ընելու ենք այս պարագան»… «Ժողովուրդ մը—շարունակում է հայ թերթը՝ ակնարկելով թիւրքերին—ժողովուրդ մը դարերու մէջ ժառանգաբար իր հայրենակիցներուն ստացած հոգեբանութիւնը ոչ Համաձայնական պետութիւններու խրոխտ մարտանաւերը և ոչ ալ զինուորական, թերևս առժամեայ տիրական ու սպառնացայտ կեցուածքներ, կրնան մէկ օրէն միւսը յեղաշրջել»։

Ապա ուրեմն, ո՞ւր է երաշխիքը։

Եւ թերթերը ահա թէ ինչումն են գտնում երաշխիքը, միակը և անպայմանը։

«Հայը այլևս կաթնտու կով մը չէ։ Հայը ազատ պիտի ըլլայ իր սեփական կամքով իր ճակատագիրը որոշելու՝ համաձայն Վիլսոնի սկզբունքներուն… Ոչ Սան Ստեֆանոյի համբաւեալ դաշնագրին մեզ յատուկ յօդուածը և ոչ Բեռլինի չարաղէտ 61 յօդուածը կրնան հայ ժողովուրդի անհուն ցաւերուն սպեղանի ըլլալ և տալ իրեն իրական և հաստատուն երաշխիքներ։ Մեր նուիրական իրաւունքները հայութեան գոյութեան և ազատ զարգացման կռուանը քաղաքակիրթ ազգերու խմբակցութենէն է որ պիտի պահանջենք. մեր զոհերուն թիւը մեր փաստերը պիտի աւելցնէ և ինչ որ ալ ըլլայ մեզմէ ոմանց կարծիքը քաղաքականութեան պոռնկութեան մասին, վստահ ըլլալու ենք թէ հայ ժողովրդին անհուն, անհաշուելի զոհաբերութիւնները տիեզերական խղճմտանքը ցնցեց և թէ Ալպիոնի վեհաշուք զրահաւորները Արարատի գագաթն իսկ կրնան մագլցել հիմա»… («Ն. կ.»)

Աւելացնել այդ ամենին, ի հարկէ, ոչինչ չկայ, եթէ միայն «վստահ ըլլանք» թէ յիրաւի մեր կարծիքը «քաղաքականութեան պոռնկութեան մասին», գոնէ մեր վիճակի վերաբերութեամբ, մի բոպէ կարող է սխալ լինել. եթէ «վստահ ըլլանք» թէ յիրաւի «Ալպիոնի վեհաշուք զրահաւորները», պիտի ուզենան, «Արարատի գագաթն իսկ մագլցել հիմա»։

Վ. Փափազեան

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Վիլսոնի եւ Հռոմի պապի տեսակցութիւնը։

Բոլշեւիկների զիջումները Դաշնակից պետութիւններին։

Զինուորա-բանուորական խորհրդի որոշումը։

Դրութիւնը Շարուրում։

ՄԱՄՈՒԼ

Թէ որչափ ազդում է հետզհետէ ազգային գործօնը սոցիալիստական հոսանքների վրայ, դրան պարզ ապացոյց են սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան Անդրկովկասի կազմակերպութիւնները։

Մինչև այժմ այդ կուսակցութիւնը, Ռուսաց Ազգային Խորհրդի մէջ վարելով զուտ ազգային, երբեմն ազգայնական քաղաքականութիւն, իրենց ներկայացուցիչների միջոցով, իր պաշտօնական թերթերի մէջ սակայն շարունակում էր գործածել սոցիալիստական ինտերնացիոնալի բառբառը։

Այսօր սոցիալիստ-յեղափոխականների Թիֆլիսի օրգան «Народное Знамя» թերթը, թէև շատ զգոյշ կերպով, բայց արդէն զիջողական վերաբերմունքի նշոյլներ է ցոյց տալիս դէպի Դենիկինի Կամաւորական բանակը, որին նոյն թերթը մինչև այժմ ամբաստանում էր, որպէս հակա-յեղափոխական ու միապետական մի ուժի։

«Ինչպէս որ վերաբերւենք դէպի Կամաւոր զօրքերը, այնուամենայնիւ այդ զօրքը կազմակերպուած և կարգապահ զօրք է, որը կռւում է զինուած հակառակորդների դէմ, բայց շատ քիչ կամ բոլորովին ձեռք չէ տալիս խաղաղ ազգաբնակութեանը»։

Այսպէս է բնորոշում սոցիալիստական թերթը այն զօրքը, որին նա համարում էր մինչև այժմ անիշխանութեան մի ուժեղ գործօն, հակադրելով այն Հիւսիսային Կովկասի տեղական այն ուժերին, որոնք, ինչպէս և Դենիկինը, կռւում են բոլշևիզմի դէմ։

* * *

«Մշակ»-ի յանկարծակի սկսուած ֆլիրտը սոցիալ-դեմոկրատիայի հետ տալիս է արդէն իր բնորոշ հետևանքները. թերթը օրըստօրէ դառնում է կարծիքների պարլամենտ, ուտեղ սոցիալիստական հակաիմպերիալիստականները երբեմն անսպասելի կերպով սկսում են խօսել հին «Մշակ»-ի բառբառով, կոչ անելով անխծեալ ուժեղ պետութիւններին՝ օգնել հայ ժողովրդին։

Իր № 26-ի առաջնորդողում յարձակուելով վրաց սոցիալ-դեմոկրատական կառավարութեան վրայ, որի քաղաքականութեան պատճառով, ըստ յօդուածագրի, Հայաստանը այժմ գտնւում է կատարեալ սովի արհաւիրքի մէջ, թերթը պնդում է, թէ միակ միջոցը, որը կարող է փրկել հայ ժողովրդին բացարձակ բնաջնջումից, պիտի լինի անգլիացիների աջակցութիւնը.

«Եւ երբ մենք, ասում է «Մշակ»-ը, այլևս չենք կարողանում մի ընդհանուր լեզու գտնել մեր հարևան պետութեան հետ, ժամանակ է որ անգլիական կառավարութեան ներկայացուցչութիւնն անմիջապէս գործի դիմի և ազատի հայութիւնը այն օղակից, որ նրան շղթայել է սովի և մահացութեան ճիրաններում, որպէսզի դրանով վերջ տրուի յարատև պատերազմական վիճակին և հաստատուի վերջապէս այն խոստացուած «կարգ ու կանոնը», որ մինչև այժմ միայն ամայացրել է մեր երկիրը, բայց որը մենք չենք կարող և չպիտի կարողանանք ըմբռնել այլ կերպ, քան իբրև մի շինարար միջոց մեր երկրի և ժողովրդի պետական-հասարակական կեանքի, որի առողջ զարգացումը միայն կը

---

*) «Ժողովուրդ» թերթի այդ համարը իմ ձեռքը չի ընկել։

საქართველოს პარლამენტის

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 12 փետրուարի

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Բեռնում բացուած միջազգային սոցիալիստական համախորհրդակցութիւնը գալիս է մի անգամ ևս հաստատելու այն, ինչ որ մենք միշտ պնդել ենք «Ժողովրդի Ձայնի» էջերում, այն է՝ որ սոցիալիզմի գաղափարը դեռ ևս գրաւական չէ միջազգային համերաշխութեան ու միութեան գաղափարների կիրառման համար։ Բեռնի կոնֆերանսի հենց առաջին նիստից նորից ակտուել է, ֆրանսիական և գերմանական սոցիալիստների մէջ գոյութիւն ունեցող այն սուր վէճը, որ ծագեց համաշխարհային պատերազմի հենց առաջին օրուանից և մինչև այժմ էլ դեռ չէ ստացել այնպիսի մի լուծում, որ Համաձայնութեան Պետութիւնների սոցիալիստների և գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մէջ հնարաւոր լինի վերականգնել գոնէ այն ձևական համերաշխութիւնը, որը գոյութիւն ունէր մինչև 1914 թուականը։

Մեզ համար միանգամայն պարզ է, որ այդ վէճը այլ ևս անհնարին է լուծել այն ձևով, ինչ ձևով որ սոցիալիզմի բոլշեվիկեան թևը առաջարկել էր պատերազմի ընթացքում Ցիմմերվալդի կոնֆերանսում, որի լոզունգներին հետևեցին Ռուսաստանի բոլշևիզմը և կիսաբոլշևիզմը՝ յանձինս մենշևիկների և սոցիալիստ-յեղափոխականների։

Անկարելի է այլ ևս երևակայել, թէ ազգամիջեան պայքարը պիտի լուծուի ազգային և պետական սկզբունքների ժխտման ճանապարհով յանուն դասակարգային կռուի և այն անհիմն և այժմեան գիտութիւնից միանգամայն դատապարտուած համոզման հիման վրայ, թէ իբր իրական կեանքի մէջ գոյութիւն ունի միմիայն տնտեսական դասակարգային կռիւը, իսկ ազգը և պետութիւնը լոկ միջոցներ են բուրժուազիայի ձեռքին այդ դասակարգային կռուի համար։

Պատերազմը և Ռուսաստանի յեղափոխութիւնը ապացուցեցին, որ ազգային սկզբունքը ոչ թէ բուրժուազիայի հնարած կեղծիքն է իր եսական շահերը պաշտպանելու համար, այլ, ընդհակառակը, նա մի ուժեղ գործօն է ժողովուրդների կեանքի մէջ, նրանց ամբողջ զարգացման ընթացքում, և որ նա կապ ունի և տնտեսական շահերի հետ (ոչ միայն բուրժուազիայի, այլ և բովանդակ ժողովուրդների), բայց որի իսկական ոյժը և կարևորութիւնը բղխում է հոգեկան-կուլտուրական շրջանից, ահագին ազդեցութիւն գործելով երկրագնդի պետական կեանքի և ազգերի փոխ-յարաբերութիւնների վրայ։

Այսպիսով, Բեռնի կոնֆերանսը կամ պիտի կանգնի որոշակի և պարզ կերպով պետական և ազգային սկզբունքների տեսակէտի վրայ, և այն ժամանակ նա կը լինի Պարիզի Վեհաժողովի կրկնողութիւնը, ու լաւագոյն դէպքում՝ նրա և այդ վեհաժողովի տարբերութիւնը կը լինի ոչ թէ էական, այլ միմիայն քաղաքական, կամ թէ չէ Բեռնի կոնֆերանսը, հաւատարիմ մնալով Կ. Մարքսի ուսմունքին, հանդէս կը գայ որպէս մի յեղափոխական բողոք վեհաժողովի դէմ յանուն ապազգային ու դասակարգային սոցիալական յեղափոխութեան, ինչպէս այդ մի անգամ արին արդէն Ցիմմերվալդի կոնֆերանսը և Պետրոգրադի բանուորա-զինուորական խորհուրդը Չխեիձէի գլխաւորութեամբ։ Բայց առաջին դէպքում վերջնականապէս կը պարզուի միջազգային սոցիալիզմի գաղափարական ճգնաժամը, քանի որ նրա որոշումները կը հիմնաւորուեն ճիշտ այնպէս, ինչպէս այդ անում է բուրժուական համարուող Վիլսոնը, որը կանգնած է ազգային-պետական ապադասակարգային և ազատամիտ տեսակէտի վրայ։ Եւ այսպիսով կը հաստատուի, որ սոցիալիզմը մի նոր գաղափար չէ, որը պիտի հիմովին յեղաշրջէր այժմեան կուլտուրական աշխարհը ընդդէմ ազատամիտ-ռամկավար պետական աշխարհայեացքի, այլ, ընդհակառակը, որ նա լաւագոյն դէպքում գալիս է գործադրելու հենց այն սկզբունքները, որոնք կազմում են ազատամտութեան հիմնական գաղափարները, այսինքն՝ համերաշխութիւնը և միութիւնը պետութիւնների եւ որպէս կազմակերպուած բովանդակ ազգերի մէջ։ Իսկ երկրորդ դէպքում, այսինքն, երբ Բեռնի կոնֆերանսն ընդունի բոլշևիկական (կամ կիսաբոլշևիկական) պլատֆորմը, հանդէս գալով որպէս լոկ անպատասխանատու օպպոզիցիա, կանգնած աւանդական ապազգային-հակապետական դասակարգային տեսակէտի վրայ, այն ժամանակ կոնֆերանսը կը կորցնի ամենակուլտուրական երկիրների բանուորական կուսակցութիւնների համակրութիւնը այն կազմակերպութիւնների աչքում, որոնք ներկայացնում են այդ երկիրների բանուորութեան ճնշող մեծամասնութիւնը և կանգնած են զուտ ազգային-պետական հողի վրայ։

Եւ երկու դէպքում էլ, զանազան ձևերով կը ստեղծուի մի նոր մերձեցում լայն բանուորական շարժման և հետևողական ազատամիտ-ռամկավար հոսանքների մէջ. մի երևոյթ՝ որը վաղուց էր նկատուած Եւրոպայում, սկսած Բեռնշտայնի ռեվիզիոնիստական թէօրիայի հանդէս գալու օրից, որի զարգացմանը, սակայն, խանգարում էին Նիկոլայ II-ի և Վիլհելմ II-ի միապետական - բիւրոկրատական կարգերը։

Մենք քանիցս առիթ ենք ունեցել կրկնել այս մտքերը, և այժմ էլ Բեռնի կոնֆերանսը գալիս է հաստատելու, թէ որքան ճիշտ է մեր տեսակէտը։

Դժբախտաբար Անդրկովկասի բանուորութեան «ղեկավարները» մինչև այժմ չեն ուզում ըմբռնել այն, ինչ որ վաղուց է պարզուել Եւրոպայի սոցիալիստների համար։ Իսկ այն, ինչ որ կատարւում է Թիֆլիսում և գլխաւորապէս Բագւում, վերջ ի վերջոյ պիտի միանգամայն հիասթափութիւն պատճառի բանուորներին, հեռացնելով նրանց այն ղեկավար մտաւորականներից, որոնք յանուն իրենց ցնորքների տանում են բանուորութեանը դէպի կատաստրոֆաները, կազմալուծելով հենց իրենց սոցիալիստական բանակը։

նպաստի և երկու հարևան ժողովրդների նորմալ փոխ-յարաբերութիւններին»։

Այսպէս է գրուած «Մշակ» № 26-ի առաջնորդողում։

Իսկ երեք օրից յետոյ, մի պզտիկ առաւօտ «Մշակ»-ի խիստ սոցիալիստական խմբագրութիւնը յանկարծ յիշում է, որ Ջոհրաբեաններին անյարմար է խօսել Գր. Արծրունու ոճով, և ահա նոյն թերթի № 30-ի մէջ կարդում ենք հետևեալ յայտարարութիւնը.

«Խմբագրութիւնս այսու յայտարարում է, որ թերթիս № 26-ի մէջ տպուած յօդուածը, որ կրում է «Յարատև պատերազմական վիճակ» վերնագիրը, զետեղուել է իբրև առաջնորդող յօդուած առանց խմբագրական մարմնի վաւերացման, ուստի և խմբագրութիւնս վերացնում է իրանից պատասխանատուութիւնն այդ յօդուածի համար»։

Մենք շատ լաւ ենք հասկանում «Մշակ»-ի խմբագրութեան ծանր դրութիւնը և միանգամայն ցաւակցում ենք նրան։ Չէ՞ որ հենց նոր «Մշակ»-ը ճգնում էր հաստատել, թէ իբր Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը, բուրժուական լինելով, ձգտում է յանուն իր դասակարգի շահերի, յենուել դրսի ոյժերի վրայ ընդդէմ հարևան ազգերի (թէև բոլորին յայտնի է, որ Հայ Ժողովրդական Կուսակցութեան իր ամենահիմնական նպատակն է առաջ բերել Անդրկովկասի ժողովրդների փոխյարաբերութիւնների կանոնաւորումը, անմիջական կապեր հաստատելով նրանց մէջ)։ Եւ յանկարծ «Մշակ»-ի էջերում տպւում է մի խմբագրական յօդուած շատ աւելի «բուրժուական», քան ինքը բուրժուազիան է, ըստ «Մշակ»-ի սոցիալիստական հասկացողութեան։

Խե՜ղճ Կարլ Մարքս! Ես ինչե՜ր են անում քո անունից քո հայ ուղղահաւատ հետևողները։ Մի տես, թէ ինչպէս են արդարանում երբեմն քո ասած խօսքերը։ «Ե՛ս... բայց ես Մարքսիստ չեմ»։ (Moi, je ne suis pas marcsiste)։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԹԵՐԹ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Կիրակի, փետրուարի 9-ին, Ալեքսանդրապոլում լոյս է տեսել Հայ Ժողովրդական Կուսակցութեան նոր օրաթերթը՝ «Նոր Կեանք» վերնագրով։

Ստացուած համարները կարելի է գնել «Ժողովրդի Ձայն»-ի գրասենեակում։

ՆԱԽԱԳԱՀ ՎԻԼՍՈՆԸ ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՄՈՏ

Նախագահ Վիլսոնը Հռոմ եղած ժամանակ ընդունուեց Պապի կողմից։ Այդ առաջին դէպքն էր, որ Միացեալ Նահանգների նախագահը մտնում էր Վատիկանի շէնքը։ Պապը դուրս եկաւ Վիլսոնի մօտ բոլորովին սպիտակ հագած և մեկնած ձեռքերով և սեղմեց նրա ձեռքը։ Յետոյ մտան գահական դահլիճ, ուր և կայացաւ տեսակցութիւնը։ Այդ խօսակցութեան նիւթը կազմում էին շատ կարևոր հարցեր, որոնց թւում և սոցիալական խնդիրներ։ Խորհրդակցութեան նիւթ էին կազմում նաև խաղաղութեան դաշնագիրը և Պաղեստինի ու Հայաստանի հարցերը։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԷՏԸ

Կլեմանսոն նորերս ասաց, թէ ինքը համաձայն չէ նախագահ Վիլսոնի հետ շատ խնդիրներում։ «Ամերիկան շատ հեռու է Գերմանիայից, յայտնեց պ. Կլեմանսոն, իսկ Ֆրանսիան կողքին։ Եւ պէտք է կարծել, որ այն, ինչ որ պէտք է անուանել ֆրանսիական և ամերիկեան հայեցակէտ, խաղաղարար կոնֆերենցիայում կը դառնայ անհամաձայնութեան և վէճերի առարկայ։ Եւ սկզբից պէտք է ենթադրել, որ ապագայ ժողովուրդների դաշնակցութիւնները պէտք է դրուեն հաւասար պայմաններում, անկախ նրանց քաղաքական ոյժերի տարբերութեան։

ԳԵՆ. ԲՈՒՐՆԻԵՒԻՉԻ ՀԱՆԴԷՍ ԳԱԼԸ

Թիֆլիսում ստացուած տեղեկութիւնների համաձայն, գեներալ Բուրնիևիչի զօրախմբերը գրաւել են Սոչիի շրջանը անպատասխանատու կերպով, որովհետև այդ քայլն արուած է առանց Կամաւոր զօրքի հրամանատարութեան գիտութեան։ Ցամենայն դէպս դէպի այդ շրջանն են ուղարկուած վրացական զօրքեր՝ նախկին դրութիւնը վերականգնելու համար։ Անգլիական միսիայի ներկայացուցիչ պոդպ. Ուաիտը նոյն ուղղութեամբ որոշ քայլեր է արել։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՋՐԱՀԱՆՍԻԵՐԸ ԲԱԼԹԻԿ ԾՈՎՈՒՄ

Եկատերինոդարում ստացուած տեղեկութիւնների համաձայն, ֆրանսիական զրահանաւերը մտել են Բալթիկ ծովը։

ՇԱՐՈՒՐՈՒՄ

Դաւալուի դէպքերը վերջացել են։ Անգլիացիների միջամտութեամբ կողմերը դադարեցրել են թշնամական գործողութիւնները։ Նախիջևանի շրջանը յայտարարուած է անգլիական գեներալ նահանգապետութիւն։

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓԱԿՈՒՄԸ

Հայաստանի կառավարութեան կարգադրութեամբ Հայաստանի դպրոցները փակւում են մինչև սեպտեմբեր։ Ուսուցիչները կոչուելու են պարենաւորման և այլ աշխատանքների։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

ԲՈԼՇԵՒԻԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Բոլշեւիկների զիջումները

ՌԻԳԱ, 8 փետր.—Պարիզից ստացուած վերջին տեղեկութիւնները հաղորդում են, թէ արտաքին գործերի կոմիսարի պատասխան-նոտան Իշխանաց կղզում հրաւիրելու մասին տակաւին չէ հրատարակուած, բայց նրա մասին մեծ խօսակցութիւններ են տեղի ունենում։ Անգլիական «Դէյլի-Մէյլ» թերթը գրում է. «Չիչերինի պատասխանը՝ Դաշնակիցներին հրաւիրելու մասին, կազմուած է շատ խաղաղ տոնով։ Դաշնակից պետութիւններին զիջողութիւնները, ըստ երևոյթին, նշանաւոր, կարող են թեթևացնել հաշտարար կոնֆերենցիայի խնդիրները։ Բոլշևիկ կառավարութիւնը ոչ թէ իր սկզբունքային համաձայնութիւնն է յայտնում Դաշնակիցների կողմից ռուսական տերրիտորիայի մի քանի մասերը գրաւելու համար, այլ և համոզուած է, որ ապագայում այդ տերրիտորիայի դրութիւնը կը մնայ այնպէս, ինչպիսին այժմ է։ Խորհրդային կառավարութիւնը պահանջ է յայտնում ռուս բուրժուայի դրամագլուխների մասին, բայց խոստանում է ճանաչել արտասահմանեան փոխառութիւնները, թոյլատրել օտար արդիւնաբերութիւնները և գործակցել նրանց։ Ֆրանսիայի ղեկավարող շրջաններում ենթադրում են, որ այս պատասխանը շատ կը պարզեցնի մթնոլորտը։

Վեյմարի ազգային ժողովի աշխատանքները

Ինչպէս լրագիրները հաղորդում են, Վէյմարում եկան այն համոզման, որ ազգային ժողովի աշխատանքները չեն կարող աւարտուել նշանակուած երկու ամսուայ ընթացքում։

Այդ ժամանակը անցնելուց յետոյ, հաշուած նաև զատկական ընդհատումը, կը գայ 11 ապրիլի, երբ ազգային ժողովը նորից կը հրաւիրուի և այս անգամ շատ կարելի է Բերլինում։

Բժիշկ Լեվինը ձերբակալուած

ՄԻՒՆԽԵՆՈՒՄ ձերբակալուած է սպարտակեան ագիտատոր Լեվինը, Մոսկուայի բնակիչ։ Նա մեղադրւում է քաղաքացիական կռիւ ծագեցնելու գործողութեան մէջ, սակայն ի նկատի ունենալով նրա մտաւոր կարողութեան խանգարումը, նա յանձնուած է բժշկական հոգատարութեան խնամքին։

Ֆոն-Գերլիխի կարծիքը ապագայ պատերազմի մասին

Կիրակի, Բերլինում, գերմանական հաշտարար ընկերութեան ժողովում ստատս-սեկրետար օգնական ֆոն-Գերլիխը յոյս յայտնեց, որ ժողովուրդների դաշնակցութեան կազմակերպելու հետ զուգընթաց, ապագայում պատերազմը կը դադարի, այնպէս որ ընդհանուր զինուորական ծառայութեան փոփոխումը հնարաւոր կը դառնայ և այդ դէպքում անհրաժեշտ կը լինի պահել սահմանափակ քանակութեամբ միլիցիոնական զօրք։

Վիլսոնեան ժողովուրդների դաշնակցութիւնը Գերմանիայում

«Ֆրանկ. Ցէյտ.»-ը վճռական կերպով պաշտպանում է բոլոր Գերմանիայի ժողովուրդների դաշնակցութեան Վիլսոնեան ծրագիրը։ Միայն ազգային ընտանիքներում և ազգային մթնոլորտում Գերմանիան կարող է ապագայում գոյութիւն ունենալ և ծաղկել։

Բոլշեւիկների բանակը ոչնչացրած

ԹԻՖԼԻՍ, 11 փետր.—Անգլիական միսիան խնդրում է գործակալութիւններից հրատարակել հետևեալը.—Հիւսիսային ճակատի Կամաւոր զօրքի հրամանատար գեներալ Վրանգելը հեռագրում է հետևեալ յաջողութիւնների մասին.—Բոլշևիկական մի ամբողջ բանակ, Հիւսիսային Կովկասում, բոլորովին ոչնչացուած է և Մանիչից մինչև Ղզլար — Մոզդոկ — Վլադիկաւկազ գիծը բոլորովին ազատ է բոլշևիկներից։ Այդ կտրում է բոլշևիկների բոլոր յետ նահանջելու ճանապարհները, բացառութեամբ դէպի Աստրախան - Սարատով տանող երկաթուղային ճանապարհը և եթէ այդ վերջինն էլ Կամաւոր զօրքերը կտրեն, այն դէպքում, բոլշևիկների Աստրախանի ոյժերը, որպիսին առանց այն էլ թուլացած էին, ստիպուած կը լինէին անձնատուր լինելու։

Դումայի որոշումը

ԹԻՖԼԻՍ, 11 փետր.—Երէկ կայացաւ վերականգնած քաղաքային դումայի նիստը։ Պրեզիդիումի ընտրութիւնից յետոյ, դուման խորհրդակցութիւն ունեցաւ ընթացիկ մոմենտի մասին։ Ընդունուած է հետևեալ որոշումը.—Թիֆլիսի՝ Վրաստանի կառավարութեան մայրաքաղաքի նոր կազմակերպուած դուման որոշեց.—1 Դենիկինի զօրքի արշաւանքը նշանակում է սև հարիւրակների արշաւանք դեմոկրատիայի և դեմոկրատական հանրապետութեան դէմ, որպէսզի ոչնչացնի յեղափոխութեան միջոցներով ձեռք բերածները, այլև քաղաքականապէս և ֆիզիքապէս սպանելու դեմոկրատիային։ Դուման կոչ է անում Թիֆլիսի դեմոկրատիային, առանց ազգի խտրութեան, համախմբուել ազատութեան դրօշի տակ և ամբողջ ոյժով կանգնել նրա խուժող սև հարիւրակների դէմ։ 2. Դուման միևնոյն ժամանակ խնդրում է կառավարութիւնից՝ միանգամից պարզել Դաշնակիցների [illegible] որպէսզի Թիֆլիսը իր ժամանակին հաշիւ տայ թէ ում հետ գործ ունի և թէ ինչ յարաբերութեան մէջ պէտք է գտնուի եկող արտաքին ոյժերի հետ։

Ընդհարում Ադլերի մօտ

ԹԻՖԼԻՍ, 11 փետր.—Զինուորական նախարարութեան հաղորդագրութիւն։ Գագրայի զօրախմբի շտաբի պետը հաղորդում է հետևեալը. Կամաւորական զօրքերն Ադլերից դուրս եկան առաւօտեան։ Մեր դիրքերի մօտ գտնուած հայ ազգաբնակութիւնն անցնում է Կամաւորների կողմը և կռւում է մեր դէմ։ Հենց նոր տեղեկութիւն ստացայ, որ Վեսելովսկու կամուրջի մօտ մեր և թշնամու հեծելազօրի միջև ընդհարում է եղել։ Սպանուած է մեր մի ձին։ Զինուորները բոլորն էլ ողջ են։ Թշնամին յաղթուած է և փախչում է։

Ստիվենսի ժամանումը

Բաթում ժամանեց անգլիական դեսպան Ստիվենսը։

Ֆոն Կրեսսը Բաթումում

Վրաստանից վերադարձած գերման պատուիրակութիւնը ֆոն Կրեսսի գլխաւորութեամբ 5 օր է, որ գտնւում է Բաթումում։ Պատուիրակութիւնը անգլիացիների միջոցով պէտք է ուղարկուի Պոլսի վրայով, որի համար սպասում են նաւի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ“

Այս վերնագրին տակ, Լոնդոնի «The Times» («Թայմս») հրատարակել է Պարիզի իր սեփական թղթակցի մի նամակը Հայաստանի ապագայ վիճակի մասին։ Սա այն ծրագիրն է, որի հիման վրայ մեր դելեգացիան յայտարարել է Միացեալ Հայաստանի անկախութիւնը 1918 դեկտ. 30-ին։ Այս թղթակցութիւնը տպուել է «The Times»-ի մէջ դեկտ. 31-ին հեռագրով «The Times»-ի խմբագրութիւնը աւելացնում է թղթակցութեան սկզբում հետևեալ բացատրութիւնը իբրև խմբագրական ծանօթութիւն.

«Ստորև հրատարակուած յօդուածը մօտաւոր ապագայի Միացեալ Հայաստանի սահմանների հարցի քննութիւնն է, որուն անկախութիւնը յայտարարուել է Պարիզում գտնուող հայկական դելեգացիայի կողմից, որի նախագահն է նորին վսեմութիւն Պօղոս Նուբար փաշան։ Պօղոս Նուբարը որդին է յայտնի Նուբար փաշայի, Եգիպտոսի վարչապետին, որ նշանակուած է Կաթողիկոսի կողմից և իր ետևն ունի հայկական բոլոր քաղաքական և ազգային կազմակերպութիւնները, ինչ երկրամասի վրայ ալ գտնուին նրանք»։

Ապա հետևում է Պարիզի սեփական թղթակցի յօդուածը.

«Պարիզում գտնուած հայկական դելեգացիան յայտարարել է Միացեալ Հայաստանի անկախութիւնը պարունակելով իր մէջ Թիւրքահայաստանի վեց վիլայէթները, Կիլիկիան և Ռուսական Հայաստանը։

Նոր հայկական պետութեան կազմութիւնը չի վնասում ոչ ոքի շահերին, բացի Թուրքերից։ Կարևորը այն է, որ նոր կազմուած միւս պետութիւնները,—վրացական, թաթարական և արաբական ոևէ տարաձայնութիւն չեն ունենալու Նոր Հայաստանի հետ։ Սրանց սահմանների կարգադրութիւնը շատ չնչին կարևորութիւն ունեցող խնդիրներ են։

Գլխաւոր խնդիրը միացեալ և ինքնավար մի Հայաստանի գոյութիւնն է և ես կը կարծեմ, որ դելեգատները պէտք է նկատի առնեն սա բարեկամօրէն՝ իրենց հարևանների շահերի տեսակէտից։

Վերջին ամենագլխաւոր փուլը

նա է, որ Արարատեան Հանրապետութիւնը համաձայնուել է նետել ինքզինք Թիւրքա-Հայաստանի սահմանների մէջ իբրև միացեալ պետութեան մի մասը։ Այս որոշումը մեծապէս նպաստում է Մօտաւոր Արևելքի հարցի կարգադրութեան խնդրին։ Հայաստանը իր անկախութեան մասին ունեցած բարոյական պահանջը, որ նրանք արդէն յայտարարել են, անվիճելի է։

Միակ պատճառաբանութիւնը, որ կարող են անել Թիւրքիոյ բարեկամները այն է, որ Օսմանեան բնաջնջման քաղաքականութիւնը եղել է այնքան կատարեալ, որ բաւական թուով հայեր չկան կազմելու համար բնակչութեան կորիզը։

Սա մի պատճառաբանութիւն է, որ եթէ ընդունուի, պիտի լինի բարբարոսութեան վերադարձնումի դրաւականը։

Այս քաղաքականութիւնը շատ երկար տարիներից ի վեր եղել է Թիւրքերի քաղաքականութիւնը, բայց Թալէաթի ցինիկ յայտարարութիւնը՝ թէ ինք պէտք է վերջ տայ հայկական հարցին մաքրելով հայերին իրականացած չէ։ Կոտորածի վերաբերմամբ վիճակագրութիւնները տարբերւում են իրարից և որոշ տախտակ (data) չունենք տակաւին, բայց գնահատուել է, որ Օսմանեան կառավարութիւնը մասսայական կոտորած է կազմակերպել 800,000 քրիստոնեայ բնակչութեան վրայ Թիւրքա-Հայաստանում 1915-ին։

Ուրիշ 600,000 էլ, հաստատւում է, որ փախել են։ Իսկ համահաւասար թուով էլ «տեղահանուածները» հատուցում են փնտրում հենց որ իրենց սեփական տները ազատ կը լինեն Թիւրքական գերիշխանութիւնից։ Նրանք պիտի կազմեն Նոր Հայաստանի կորիզը։ Մեծամասնութեան հարցը ինքնին լուծւում է Միացեալ Հայաստանում, պարունակելով իր մէջ 2 և կէս միլիոն ռուսական հայերին, որոնք այժմ իրենց ցանկութիւնն են յայտնում միանալու նոր պետութեան սահմաններում,

Տալով հայկական պետութեան, նոր կառավարութիւնը այնքան ուժեղ չպիտի լինի կենալու երկար ժամանակ իր ոտքերի վրայ և փորձառութիւնը ցոյց է տալիս, որ միջազգային կոնտրոլը պիտի հանդիսանայ դանդաղ և բարդ մի հանգամանք իրագործելու համար խաղաղ և անխափան յառաջդիմութիւն։

Հայաստանը պահանջում է Դաշնակից պետութեանց մի որևէ հովանաւորութիւնը — Անգլիայի, Ֆրանսիայի, կամ Ամերիկայի — պաշտպան կանգնելու մի առ ժամանակ, մինչդեռ նա կը հասունացնէ իր ուժը։

Այդ պետութիւնը պէտք է կազմակերպէ մի կառավարութիւն դնելու համար ադմինիստրացիայի գլխաւոր հիմունքները և մատակարարելու զօրքեր ինչքի և կեանքի ապահովութեան համար փոխանցման շրջանի միջոցին։

Եւ կարևոր էլ չի մեծ ույժ, որովհետև հայկական ժանդարմերիա կարելի է կազմակերպել անմիջապէս։ Կովկասում գտնուած 25,000 հայկական զօրքերը կարելի է անմիջապէս ներս կանչել 8,000 հայ զինուորներ դեռ. Ալենբիի բանակում, ինչպէս նաև այլ զինուորագրուածներ Ամերիկայում կամ այլուր։ Ժամանակաւոր կառավարութեան տակ պիտի զարգանայ մի ինքնավարչութիւն (self-administration), թերևս, առաջին անգամ, նշանակուելի մի խորհուրդով, որին յետոյ պէտք է յաջորդէ մի ընտրովի խորհուրդ (council)։ Դելեգացիան հաւատում է, որ Հայաստանը մի քանի տարիների ընթացքում կարող կը լինի ինքնակառավարութեան և ինքնապաշտպանութեան։ Նուպարը կը հաւատացնէ, որ 2 և կէս միլիոն մի բնակչութիւն կարելի պիտի լինի հաստատել այնքան շատ որքան վստահութիւն կը լինի, որ այլևս Թիւրքիոյ վեհապետութեան սուրը և սարսափը չեն մթագնելու ապագայի հեռանկարը։

Հայաստանի դատը բարոյապէս ամենաուժեղն է՝ քան ոևէ մի ուրիշ փոքրիկ ազգի, որին ճակատագիրը պէտք է վճռուի խաղաղութեան վեհաժողովում։

Աշխարհագրական մի զուգահեռական բռնում է Բելգիան, Սերբիան և Հայաստանը մի գծի վրայ։ Բոլոր այս ազգերը կեցել են գերման ճանապարհի վրայ։ Հայաստանի վրայ ի գործ դրուած ոճրագործութիւնը այն էր, որ Հայաստանը ընկել էր Եւրոպայի թիւրքերի, Կովկասի Թաթար ցեղակիցների և նաև կենտրոնական Ասիայի միջև։ Հայաստանի գոյութիւնը անհաշտելի էր համաթիւրանականութեան հետ։

Այս տարուայ գարնան հայերի բեկորները յետ պահեցին թիւրքական բանակի ալիքը Պարսկաստանից մինչև Կասպից ծովը հինգ ամսի չափ, և երբ զինադադարը կնքուեց՝ նրանցից հրոսախմբեր տակաւին շարունակեցին պատերազմել լեռներում։ Անդրանիկը թիւրքերի պատուհասը — սկզբից մինչև վերջը երբէք չենթարկուեց։

Անգլիոյ պարտքը Հայաստանին.— Ըստ երևոյթին Դաշնակիցները, Հայաստանը վերականգնելու գործում չպիտի ձախողեն։ Մեր պարտքը մեծ է, որովհետև Թիւրքիան Ռուսաստանի դէմ պաշտպանելու մեր քաղաքականութիւնն էր, որ պատասխանատու հանդիսացել է, մեծաւ մասամբ, պատերազմից առաջ, հայկական խժդժութեան։ Բեռլինի դաշնագիրն և Կիպրոսի համագումարին մէջ Ռուսաստանը չէզոքացնելով մենք վերացուցինք Թիւրքիոյ մէջ գտնուած քրիստոնեայ բնակչութեանց միակ պաշտպանը գոհանալով միայն օսմանեան կառավարութեան ռեֆորմի խոստումներով, զոր իրագործելու համար երբէք ույժ չունէինք, և մենք պէտք է իմացած լինէինք, որ Թիւրքիան երբէք մտադրութիւն չունէր իրագործելու։

Թիւրքիան հանդիսացել է մի տեսակ տնտեսական ինքնասպան, որովհետև աւերել է այն, ինչ չի կարողացել ունենալ։ Կոտորելով հայերին՝ ջնջած է բեղմնաւորութեան սերմը։ Թիւրքիոյ մէջ գտնուած ցեղերի ամենէն ընդունակը, ամենէն գործնականը, ամենէն ճարտարարուեստականը, ամենէն տաղանդաւորը եղել է հայը։ Օսմ. կառավարութիւնը հանդիսացել է իբրև մահացու սուսեր, որ սքօղած է այն երկիրը, որ պատմականօրէն սեփականութիւնը եղել է հայերին։ Հայերի ազատութեան գործը պիտի լինի այս պատերազմի ամենամեծ գործը Արևելքի քաղաքակրթութեան ի նպաստ։

ԲԱԳՈՒ

Բագուի «Наше Время» թերթի № 29-ում զետեղուած է հետևեալ հեռագիրը.

Հայաստանի Հանրապետութեան պատուիրակներ

ԷՆՁԵԼԻ, 31 յունուարի

Ստացուած է Թեհրանով ընկեր Սարգիս Արարատեանի անունով, պատճէնը անգլիական հրամանատարութեանը և Պարսից կառավարութեանը։

Մենք, Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչներս, լիազօրում ենք Ձեզ յայտնելու Պարսից կառավարութեանը և Դաշնակից պետութիւնների միսիաներին հետևեալը. Հայաստանի Հանրապետութեան մէջ ամենայն հանգստութեամբ ապրում են մի քանի հարիւր հազար թաթարներ։ Նրանք հայերին հաւասարապէս օգտւում են բոլոր իրաւունքներով և պարլամենտի մէջ ունեն իրենց ներկայացուցիչները։ Թիւրքերի հեռանալուց յետոյ Հայկական կառավարութիւնը, համաձայն պարլամենտի միաձայն որոշման՝ կէս միլիոն փախստականների իրենց բնակավայրերը տեղաւորեց։ Հարիւր հազար փախստականներ ուղարկուեցին իրենց հայրենի բնակավայրերը Շարուր-Նախիջևանի շրջանում։ Նախքան փախստականներին ուղարկելը կառավարութիւնը համապատասխան միջոցներ ձեռնարկեց խաղաղութեամբ և հանգստութեամբ տեղաւորելու փախստականներին հայրենի տեղերը փոխադարձ համաձայնութեամբ (Թաթարների հետ)։

Ցաւօք սրտի Թաթարները, Թուրք փախստական սպաների հետ, սպանեցին հայերի առաջին պարլամենտարին և փախստականներին հնարաւորութիւն չտուին առաջ շարժուել երկաթուղու ճանապարհով իրենց տեղերը։

Ղամարլու գնացող գաղթականներին ջարդեցին, իսկ միւսներին ստիպեցին յետ դառնալ Երևան։

Թաթարներն ասում էին. Թուրքերը գնալիս, մեզ յանձնեցին Շարուրի և Նախիջևանի թաթարների պաշտպանութեան գործը։ Մենք պէտք է կազմակերպենք մեր անկախ կառավարութիւնը, և այդ պատճառով է, որ թոյլ չենք տալիս հայերին վերադառնալ իրենց տեղերը։

Հայկական կառավարութիւնը ի կատար ածելու համար պարլամենտի կամքը և գաղթականներին քաղցից և հիւանդութիւններից ազատելու համար չորս վաշտ ուղարկեց Շարուրում և Նախիջևանում նրանց տեղաւորելու համար։

Թաթարները բազմաթիւ հեռագրներ ուղարկեցին Թաւրիզ, Թեհրան և Բագու, որտեղ գանգատւում էին, որ իբր թէ հայկական զօրքերը կոտորում են նրանց։

Այն ինչ իրօք հետևեալը տեղի ունեցաւ. Թաթար բանդաները, Թուրք փախստական սպաների առաջնորդութեամբ ամենուրեք յարձակուեցին հայկական զօրքերի վրայ, որով յառաջխաղացմանը խոչընդոտ հանդիսացան. Հայկական կառավարութիւնը հնարաւոր բարդութիւններ առաջ չբերելու համար հայ զօրքերի ապագայ առաջխաղացումը արգելեց. այդ կարող են հաստատել Դաշնակից պետութիւնների ներկայացուցիչների լիազօրը, Թաւրիզի Նահանգապետի և Դենիկինի ներկայացուցիչները։ Մեր հաշտարար կոմիսիան Թաւրիզի Նահանգապետի ներկայացուցչի հետ միասին Շարուրի մօտ ենթարկուելով յարձակման, հազիւ կարողացաւ մինչև Նախիջևան հասնել, որտեղ հանդիպեցին Անգլիայի սպայի մայոր Ֆիպսոնին, որ ուղարկուած էր գեն.-մ. Տոմսոնի կողմից Նախիջևանի փախստականներին Զանգեզուրից այնտեղ ուղարկելու։ Ի մօտոյ ծանօթանալով իրերի դրութեան հետ և տեսնելով հայ փախստականների սոսկալի վիճակը, վճռական միջոցների դիմեց և նախազգուշացրեց Թաթարներին փախստական հայերին տեղաւորման գործին խոչընդոտ չհանդիսանալ։

Սակայն այնուամենայնիւ նրանք մերժեցին։ Մայոր Ֆիպսոնը նախապէս իմանալով որ իր սպառնալիքները յաջողութիւն չեն ունենալ, ինքը անձամբ կարգադրեց իսկոյն և եթ բաց անել բոլոր ճանապարհները, որպէսզի գաղթականները հնարաւորութիւն ունենային վերադառնալու իրենց տեղերը։ Այն դէպքում, եթէ իր կարգադրութիւնները ի կատար չեն ածուի, նա ստիպուած կը լինի Նախիջևանում կարգ հաստատելու համար հայկական զօրքեր մտցնել։

Հայաստանի Հանրապետութեան լիազօրներ՝ Կոլենոլ, Շահբազեան և Տէր-Ղուկասեան»։

ՔՐՈՆԻԿՈ՛Ն

◆ **Հայ-վրացական խորհրդակցութիւն.**— Հայ-վրացական կոնֆերանսի այն որոշումներից յետոյ, որ կապուած են պատերազմական գործողութիւնների հետ Հայաստանի և Վրաստանի միջև պիտի տեղի ունենայ խորհրդակցութիւն, որի ժամանակ պէտք է քննուեն այն խնդիրները, որոնք կոնֆերանսի քննութեան չեն ենթարկուել։ Բացի պոստ-հեռագրական, երկաթուղային, հաղորդակցութեան, ապրանքների տեղափոխութեան խնդիրներից՝ խորհրդակցութիւնը զբաղուելու է նաև տրանզիտի, հայկական կորպուսի գոյքի, հայկական միսիայի վերաբաշխման և մի քանի այլ խնդիրներով։ Այդ նիստը, որ նշանակուել էր անցեալ շաբաթ օրը, ապա երկուշաբթի օրը, բայց տեղի չեն ունեցել խորհրդակցութեան նիստերը, երևի այն պատճառով, որ վրաց կառավարութիւնը զբաղուած է ներ բարդութիւններով։

◆ **Գեն. Շատիլովի մահը.**— Թիֆլիսում յանկարծամահ եղաւ նախկին փոխարքայի քաղաքացիական մասի օգնական գեն. Ն. Պ. Շատիլովը, որը մի քանի օր առաջ ձերբակալուել էր վրաց կառավարութեան կողմից։

◆ **Թիֆլիսի միլիցիապետի օգնականը պաշտօնից հեռացուած.**— Միլիցիայի գործողութիւնները քննող յանձնաժողովի կարգադրութեամբ պաշտօնից հեռացուել է միլիցիապետի օգնական Մումուլաշվիլին։

◆ **Հաց.**— Բաթումի կայարանի անգլիական կոմենդանտը Նոթանեբի կայարանի պետին յայտնել է, որ իրենց ստացած տեղեկութիւնների համաձայն, Թիֆլիսում սով է, ուստի իրենք պատրաստ են Թիֆլիսին մատակարարել հարկաւոր քանակութեամբ հաց, եթէ ուղարկուեն փակ վագոններ։

◆ **Բաթում մեկնելը արգելուած.**— Անգլիական միսիայի կարգադրութեամբ Բաթում մեկնելն արգելուած է մինչ նոր կարգադրութիւն։

◆ **Անգործների ցուցակագրութիւն.**— Անգլիական միսիայի երկաթուղային յանձնաժողովը արդէն ցուցակագրել է բազմաթիւ անգործ երկաթուղային ծառայողներ, որոնցից 2,000-ը ռուսներ են։ Ցուցակագրութիւնը շարունակւում է։

◆ **Նաւթ Թիֆլիսի համար.**— Թիֆլիսի ազգաբնակութեան կարիքների համար մեծ քանակութեամբ նաւթ է գնուել Բագւում, որը կը ստացուի մի քանի օրից յետոյ։ Նաւթը ազգաբնակութեանը էժան գնով բաժանելու նպատակով քաղաքային վարչութիւնը որոշել է ռեկվիզիցիայի ենթարկել մի քանի պահեստներ։

◆ **Մթերք եւ դեղորայք Հայաստանի համար.**— Թիֆլիսից Երևան մեկնեց մի յատուկ գնացք, որով Հայաստանի կառավարութեան և ամերիկական միսիայի կողմից ուղարկուեց կենսամթերք և դեղորայք։ Նոյն գնացքով Երևան մեկնեց ամերիկական միսիայի գլխաւոր լիազօր Ջէմս Արրոլ։

◆ **Պաշտօնից արձակուած գնդապետ.**— Վրաստանի զինուորական մինիստրի հրամանով պաշտօնից հեռացուած և հսկողութեան տակ է և առնուած 3-րդ գնդի գնդապետ Ջափարիձէն, Լեչխումի գործողութիւնների ժամանակ չարագործութիւն կատարելու համար։ Այդ չարագործութիւնները բացել է ներքին գործերի մինիստրը Լեչխումի գաւառում կատարած ճամբորդութեան միջոցին։

◆ **Հայ-վրացական հաշտութեան [illegible].**— Հայաստանի և Վրաստանի միջև կնքուած հաշտութեան պայմանների տեխնիքական մասերը մշակելու համար՝ երկու կողմերից ընտրուել է յանձնաժողով։

◆ **Վրաստանի քաղաքացիների եւ մամուլի ուշադրութեան.**— Սահմանադիր ժողովի ընտրական պայքարը եռման մէջ է։ Ես իմ պարտքն եմ համարում քաղաքացիներին յիշեցնել հետևեալը.— Ով որ չարամտօրէն կը հրատարակի սուտ տեղեկութիւններ Սահմ. Ժողովի թեկնածուների անձնաւորութեանց կամ նրանց մասնաւոր կեանքի մասին, նպատակ ունենալով վարկաբեկել նրանց կամ այն կուսակցութեանը, որ ներկայացնում է նրան,— այդպիսիները կենթարկուեն բանտարկութեան (տես Սահմ. ժողովի կանոնադրութեան § 95)։ Այս յայտարարութիւնը արւում է այն հանգամանքի պատճառով, որ շատերը կարող են գտնուել, որ չիմանան օրէնքի պահանջները, ուստի և ընտրական պայքարի ժամանակ չեն քաշուի վարկաբեկել ներկայացուած այս կամ այն թեկնածուին։ Սահմանադիր ժողովի կենտրոնական յանձնաժողովը այդ մասին ունի փաստեր։ Ներկայացուած թեկնածուներից մէկը արդէն դիմել է յանձնաժողովին, խնդրելով պաշտպանել իրեն յարձակումներից։ Հաղորդելով այս մասին քաղաքացիներին և մամուլին, խնդրում եմ նկատի առնել օրէնքի պահանջները։ Սահմանադիր ժողովի ընտրակ. կենտր. յանձնաժողովի նախագահ՝ Ա. Լոմթաթիձէ.

◆ **Անգլիացիք Դենիկինի բանակում.**— Տեղեկութիւն է ստացուել, որ անգլիական հրամանատարութեան ներկայացուցիչները Պետրովսկից մեկնել են Դենիկինի բանակը։

◆ **Անընդունելի ազգանուն.**— Մօտ օրերս նախկին երկաթուղային ծառայող մի «Захаровъ դիմում է երթևեկութեան մասի (служба движенія) կառավարիչ Աբելովին խնդրագրով նրան ծառայութեան ընդունելու համար։ «Ընկեր» Աբելովը խնդրագրի վրայ հետևեալ մակագրութիւնն է անում՝ «съ такой фамиліей нельзя принять на службу»։

ՎՐԱՍՏԱՆ

ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԻ ԶԻՆՈՒՈՐԱ-ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ 1919 Թ. ՓԵՏՐՈՒԱՐԻ 8-ԻՆ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԲԱՆԱՁԵՒԸ

Լսելով զեկուցումը գեներալ Դենիկինի զօրքի արշաւանի մասին դէպի Վրաստանի դեմոկրատիկ հանրապետութիւնը և երկրի քաղաքական դրութեան մասին, Թիֆլիսի զինուորա-բանուորական խորհրդի միացեալ ժողովը, պրոֆեսիոնալ միութիւնների վարչութիւնները, երկաթուղու կենտրոնական կոմիտէն, փոստ-հեռագրատան ծառայողների կենտրոնական կոմիտէն և Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորները որոշում է. 1) որ Դենիկինեան զօրքի արշաւանքը նշանակում է սև ռէակցիայի արշաւանք դէպի դեմոկրատիկ Վրաստանը, որը կարողացաւ պահպանել Ռուսաստանի՝ յեղափոխութեան ձեռք բերածը և իր սեփական տիրապետութիւնը Վրաստանի հանրապետութեան սահմաններում, 2) որ Դենիկինեան զօրքի յաղթանակը Վրաստանի զինուած ույժերի դէմ նշանակում է բոլոր ձեռք բերած ազատութեան ոչնչացումն և սպառնում է ֆիզիքապէս ոչնչացնել բոլոր դեմոկրատիան։

Այդ պատճառով ժողովը կոչ է անում Վրաստանի բոլոր կենդանի ույժերին ոտքի կանգնել պաշտպանելու Վրաստանի սահմանները և իր բոլոր ույժով հարուած տալ առաջ շարժուող ռէակցիային։ Կռուի մէջ փորձուած ժողովրդական գուարդիան և հանրապետական զօրքը բուռն կերպով կը պաշտպանեն ազատ և դեմոկրատիկ Վրաստանի սահմանները Դենիկինեան հակայեղափոխական ոտնձգութիւններից թէ արտաքուստ և թէ ներքուստ։

Ժողովը քննելով երկրի դրութիւնը կապուած Դենիկինի արշաւանքի հետ և մի քանի ճակատների բարդութիւնը այլ և Բաթումի մէջ սև հարիւրակների կազմակերպումը գտնում է.— 1) որ վերջին ամիսները. Կովկասում անգլիացիների մուտք գործելուց յետոյ, Վրաստանի հանրապետութիւնը, սիստեմատիքաբար, ենթարկւում է թշնամական ույժերի յարձակման։ Որ միևնոյն ժամանակ Լոնդոնից ստացուած հեռագիրը, որպիսին վկայում էր բրիտանական կառավարութեան դէպի Վրաստանի հանրապետութիւնն ունեցած համակրանքը և պատրաստակամութիւնը պաշտպանելու նրան, ցոյց են տալիս պարզ հակասութիւն կենտրոնի հաւաստիացումների և տեղի մէջ կատարուող իրական փաստերի մէջ, ուստի մենք պահանջում ենք հանրապետութեան կառավարութիւնից անմիջապէս պարզել թէ ինչ կապ կայ բրիտանական ույժերի երևալու և Վրաստանի հանրապետութեան դէմ թշնամական գործողութիւնն երևալու մէջ, որպէսզի դեմոկրատիան ընդ միշտ պարզելով գործի իսկական դրութիւնը կարողանայ ապագայում կռուել իր ազատութեան և իր գոյութեան համար։

Միևնոյն ժամանակ ժողովը կոչ է անում բոլոր բանուորական կազմակերպութիւններին և պրոֆեսիոնալ միութիւններին պատրաստ լինել հանդէս գալու կոմիտէի առաջին իսկ կոչին որպիսին ընտրուած յատուկ այս նպատակով և պաշտպանել իր իրաւունքները։

(Ընդունուած է միաձայն)

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԻԿՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐՈՔ

IV

Մայիսի վերջերին տաճիկները երկու անգամ յարձակւում են գործում Սալմաստի և Ուրմիայի ուղղութեամբ։ Զինուորական գործի ղեկավարները լուր առնելով մօտեցող թշնամու մասին՝ կամենում էին օր առաջ հեռանալ Ուրմիայի ռազմագծից՝ թողնելով Ուրմիայի ժողովուրդը անպաշտպան. բայց սրբազանի ներկայութիւնը և ժողովրդի բողոքը, այդ [illegible] քայլի առաջն առնում է, և [illegible] 2-ին հայկական [illegible] նալով ասորիներին, [illegible] է տալիս թշնամուն, [illegible] կատում, ըստ հաստատուն տեղեկութեանց՝ հասնում էր 3500-ի և մերձաւոր պահեստում — 2000-ի. իսկ Հէյդարաբաթ — Ուշնի գծի վրայ — 2500-ի. կռուին մասնակցում էր 64 գնդացիր, 3 թեթև թնդանօթ։ Այս կռուի օրերին Վանի կոմիսար Կոստի Համբարձումեանը գալիս է Ուրմիա և լուր առնելով որ թշնամին պատրաստւում է յարձակուել Սալմաստի վրայ, կարգադրում է իր կռուող ույժերին հալածել թշնամուն, սակայն Սալմաստում տեղի ունեցող ներքին անհամաձայնութիւնները արգելք են դառնում իր կարգադրութիւնները ի կատար ածել։ Ահա թէ ինչպէս է նկարագրում մի ականատես.— «Սալմաստում անմիջապէս խորհրդակցութիւններ կազմեցինք և հենց առաջին օրից հասկացայ, որ ես անզօր եմ հասկացնելու նրանց մեր դերը և համաձայնեցնելու վճռող կոմիտէը։ Տխուր էր մանաւանդ մեր ինտելիգենտների, գործիչների և ղեկավարների դերը։ Վանեցիք բացարձակ տէր էին իրականութեան և գաղթի կողմնակից. մի անգամ պոկուելով երկրից, կամենում էին գաղթը շարունակել դէպի աւելի ապահով վայր։ Իսկ սալմաստեցիք դէմ լինելով գաղթին, չէին ներկայացնում զինուորական պատրաստի ույժ և յոյսը դրել էին ղեկավարների վրայ. այս վերջիններն էլ լիքը խուլ ատելութեամբ իրար դէմ, կազմել էին Ղալասարի, Փայաջուկի, Հաֆթվանի հոսանքներ. գործում էին մասնաւոր խմբեր, կային անկախ ձեռնարկութիւններ։ Աւելի սարսափելի էր ասորիների և Ղալասարի մեր ընկերների միջև տեղի ունեցած թշնամութիւնը։ Ո՛չ Շէյխի սպառնալիքը, ոչ Մարշիմոնի միջամտութիւնը, ոչ էլ ես չկարողացանք հարցը հարթել. նոյն իսկ ինձ կոչեցին ագենտ»։

Սալմաստում տեղի ունեցող ներքին կռիւները թշնամուն հնարաւորութիւն են տալիս Կոթուրի մոտերքը միանալ, ուժեղանալ, տիրել Խոյին և առաջ շարժուել Թաւրիզի ուղղութեամբ։ Սաստկանում է խուճապը Սալմաստում. մտածում են ընդհանուր գաղթի մասին։ Այդ միջոցին Աղա-Պետրոսը — ասորական զօրքի գլխաւորը — իր ույժով գալիս է Սալմաստ թշնամուն դիմադրելու։ Հայ ղեկավար շրջաններից սուրհանդակ է ղրկւում Ջուլֆա Խարազեանին՝ 2 յունիսի յարձակման դիմելու, սակայն Խարազեանը ինչ-ինչ նկատումներով տեղից չէ շարժւում։

Կռիւը սկսւում է թէ Սալմաստում և թէ Ուրմիայում։ Հայերի ույժը այդ ժամանակ Սալմաստում հասնում էր 5000-ի. թշնամուն ջարդ են տալիս և նոյն իսկ խլում մի թնդանօթ և մի քանի գնդացիր։ Սակայն սոյն յաջողութիւնները չեն կարողանում կասեցնել գաղթի տրամադրութիւնը։ Յունիսի 4-ին սկսւում է Սալմաստի գաղթը դէպի Ուրմիա. երկու օրում Ուրմիան լցւում է գաղթականներով։ Հէնց այդ օրերին Անդրանիկը աշխատում էր օգնութեան հասնել Սալմաստին, բայց Խոյում անյաջողութեան հանդիպելով վերադառնում է Ջուլֆա։

Ուրմիայում կռուող ույժերը հետզհետէ թողնում էին ճակատը և ինքնագլուխ յետ դառնում. տիրում էր ընդհանուր լքում։

Յուլիսի 5-ին գալիս է մի անգլիական աէրոպլան և տալիս է զինուորական հրահանգներ և խորհուրդներ. անգլիական հրամանատարը պնդում է մնալ Ուրմիայում և կազմել մի թռուցիկ խումբ՝ Սային Կալէից — անգլ. բանակատեղից — ռազմամթերք բերելու։ Պատրաստւում է թռուցիկ խումբը և մեկնում Սային-Կալէ. հենց որ 17-ի երեկոյեան Աղա Պետրոսի սուրհանդակը լուր է բերում, որ ճանապարհը մինչև Միանդուաբ ազատ է, սկսւում է գաղթը։

Անգլիական փոքրաթիւ զօրքը, որ կենտրոնացած էր Սային-Կալէում և նրա շրջակայքում, հակառակ իր խոստման չկարողացաւ հարկաւոր օգնութիւն հասցնել Ուրմիայի շրջանի քրիստոնեայ ազգաբնակութեան և կռուող ույժերին, և 85,000 քրիստոնեայ ազգաբնակութիւնը, որից 60,000 ասորի և 25,000 հայ, — տեսնելով տաճիկների օրըստօրէ ուժեղանալը և դէպի Ուրմիա արշաւելը և կառող ուժերի մէջ գոյութիւն ունեցող անհամաձայնութիւնը, գաղթում են դէպի Սոյին - Կալէ՝ հանդիպելու անգլիական բանակին։ Յունիսի 18-ի առաւօտեան Ուրմիայում այլ ևս մարդ չէր մնացել։ Վաղօրօք վանեցիք տեղաւորուել էին Բարանդուզ-չայի ափին, քաղաքից 21 վերստ հեռաւորութեան վրայ դէպի հարաւ, սալմաստեցիք 17 վերստի վրայ՝ բոլորն էլ պատրաստ գաղթելու։

Հենց որ քրիստոնեայ ազգաբնակութիւնը թողնում է քաղաքը, տեղական թուրքերը անմիջապէս սկսում են ալան-թալանը։ Գաղթականութիւնը Համադան է հասնում քսան օրում։ Ուրմիայից մինչև Համադան գաղթականութիւնը 15,000 զոհ է տալիս։

Ճանապարհին մեռնում է Շէդը, սպանւում Կաստին, մեռնում են Մնացականը, ասորի դոկտոր Դաւիթը. անյայտանում են շատերը, որոնց մէջ և Ա. Թումանեանը։

Անյայտացածներից ոմանք, ըստ լուրերի, անգլիական բանակի մէջ են մտած Սային-Կալէում, Բիջարում և Համադանում։

Մինչև դեկտեմբ. 1918 թ. Սալմաստի և Ուրմիայի գաղթականութեան վիճակի մասին ճշգրիտ տեղեկութիւն չունէինք, բայց երբ մի խումբ գաղթականներ—թւով 35 հոգի, Սալմաստի Փայաջուկ գիւղից՝ իրենց սայլերով և եզներով գալիս են Թաւրիզ, և Թաւրիզ-Միանէ հեռագրական գիծը վերականգնւում է, այդ ժամանակ միայն պարզւում է գաղթականութեան սոսկալի պատկերը։

Համադանից զէնքի ընդունակ երիտասարդներից շատերը մտնում են ծառայութեան անգլիական բանակի մէջ, մի մասը անցնում է Բաքու և մի մասն էլ—թւով հինգ հազար հոգի—մտածում է գալ Թաւրիզ և ապա Սալմաստ-Ուրմիա։

Ահա Թեհրանից 16 դեկտ. ն. տ. 1918 թ. Ներսէս եպ.-ի անունով խփուած հեռագրի գաղթականութեան վերաբերեալ կտորը.

— «Որոշեցինք Ջանջանի վրայով մօտ 5000 գաղթականութիւն ուղարկել։ Ատրպատականի նահանգապետ Սիփահսալարը ապահովում է ճանապարհորդութիւնը. խնդրում ենք ընդունելու համար նախապատրաստութիւններ տեսնել. մեր սուղ միջոցներից ձեզ բաժին կը հանենք. դիմեցէք ամերիկական միսսիային, որ ունի այդ նպատակով յատուկ գումարներ»։

Ի պատասխան այս հեռագրի՝ առաջնորդը հեռագրում է թէ՝ եթէ ճանապարհները ձիւնով չեն բռնուած և կեանքի ապահովութիւն կայ՝ գաղթականութիւնը կարող է գալ. բայց միևնոյն ժամանակ նպատակայարմար է համարում սպասել մինչև գարուն։

Ի՞նչ անի խեղճ գաղթականութիւնը. նա մտածում է օր առաջ իր տունն ու տեղը հասնել, որպէսզի գտնէ իր ֆիզիքական գոյութիւնը պահպանելու համար գարնանացան անի, բաղ ու բախչան կարգի բերի։

Գր. Աղաջանեան

ՎՐԱՑ ԹԵՐԹԵՐԻՑ

«Էրթօբան» իր № 32-ում դետեղել է հետեւեալ առաջնորդողը՝ «Մենք և Անգլիան» վերտառութեամբ.

«Անգլիայի մուտքը մեզ մօտ բացատրւում էր կարգ ու կանոնի վերականգման անհրաժեշտութեամբ այդպիսի բացատրութիւններ էին տալիս նրա պատասխանատու պաշտօնական անձինքը։

Բայց պիտի նկատենք, որ այս յայտարարութիւնը չհաստատուեց։ Նրանց գալու հենց առաջին օրերը տեղի ունեցաւ Հայաստանի յարձակումը։ Այս պատերազմը դեռ չէր վերջացել, երբ Ախալցխայի կողմից յարձակում գործեցին մեզ վրայ թաճկական աւազակային խմբերը—հիմա էլ Սօչի կողմից Դենիկինը ներկայացրեց իր սուրը մեր դեմոկրատիան ոչնչացնելու համար։

Այսպէս Անգլիայի մուտքը մեր երկիրը պատճառ եղաւ մշտական պատերազմական և անիշխանական դրութեան ժամանակաշրջանի ստեղծման։

Գուցէ այս երկու դէպքը պատահական երեւոյթներ են, որոնք տեղի ունեցան միևնոյն ժամանակում։

Մենք ասում ենք, որ մինչև Անգլիայի մուտքը մեզ մօտ կարգ ու կանոնը աւելի էր մեր երկրի սահմաններում։ Այստեղ ուշադրութեան արժանի են նոյնպէս երկու հանգամանք. անգլիական զօրքը գտնւում է Թիֆլիսում և Վրաստանի զանազան կողմերում, որտեղ առաջ էլ յեղափոխական կարգը չի խանգարուել, որտեղ մեր պետութեան կարգ ու կանոններին հնազանդուել է։

Անիշխանութիւնը գալիս է այն կողմից, որը Անգլիայի խիստ ազդեցութեան ներքոյ էր։

Առաջին պատերազմը սկսուեց Հայաստանում, որն իր կատարեալ հնազանդութիւնն է ցոյց տալիս Անգլիային։ Յարձակումը սկսուեց այժմ Փոցխովի հովտից, այսինքն Արդահանի շրջանից, որը պիտի գրաւուէր համաձայն՚ դաշնագրի անգլիական զօրքերով, ուրեմն պատերազմը գալիս է Անգլիայի գրաւուած երկրներից։

Անգլիայի զինուորական իշխանութիւնները հաւատացնում էին, որ նրանք այդ աւազակային խմբերին կը կանգնեցնեն, նրանց գլխաւորներին, որոնք դաշնագիրը խախտում են, կը պատժեն, բայց ապստամբութիւնները շարունակւում են, արիւնը թափւում է, սակայն տուած խօսքի կատարումն չենք տեսնում։

Վերջապէս Սօչիի շրջանից մեզ վրայ յարձակւում է Դենիկինի զօրքը, որը Անգլիայի զրամով և ռազմամթերքով է պատրաստուած։ Եւ այստեղ էլ Անգլիան մեզ ճըգնում էր հաւատացնել էր մի բան, բայց պատահեց ուրիշ բան։

Ինչումն է հարցը։

Մենք չգիտենք այն դիւանագիտական լեզուն, որը խօսում է այնպէս, որպէսզի մարդ չհասկանայ բնաւ։ Մենք չգիտենք, թէ ինչ են նշանակում խոստումն ու յուսադրութիւնը կատարումն, թէ՞ ոչ կատարումն։ Ոչ էլ այն գիտենք, հենց իրեն անգլիական դիպլոմատիայի ցանկութեան համաձայն, թէ՞ նրա հակառակ է տեղի ունենում այս ամենը։ Միայն այս հարցի մեկնութիւնը անխուսափելի հարկադրութիւն է ներկայացնում։

Մենք գիտենք, որ Անգլիան մեծամեծ տնտեսական շահեր ունի Անդրկովկասում։ Հաւատում ենք, որ անգլիական զօրքի գալուստը մեզ մօտ նպատակ ունի ամենից առաջ անգլիական շահերը պաշտպանել։ Միայն անիշխանութիւնը այս շահերին չպիտի որ օգտակար լինի, որովհետև անիշխանութեան ժամանակ ոչ մի շահ չի կարող պաշտպանուած լինել։

Այսու մեզ թւում է, որ Անգլիայի ցանկութիւնը՝ իր շահերը պաշտպանելու մասին հանդիպում է նրա քաղաքական գծին, ամեն տեղ տեղական ուժերի վրայ յենուել։ Այս տեղական ուժերով շատ անգամ դուրս են գալիս և մեզ մօտ եկող ուժերն էլ, օրինակ, Բաթումում անգլիական այս քաղաքականութեամբ են օգտւում սև հարիւրականներն իրենց շահերը իրագործելու համար։

Մենք հաւատում ենք, որ անգլիական կառավարութեան հաւատացումն, թէ համակրութեամբ է վերաբերւում դէպի Վրաստանի անկախութիւնը և թէ հաշտարար վեհաժողովում աջակցումն այդ անկախութեան հաստատման—ճիշտ արտացոլումն է Անգլիայի քաղաքական գծի, և թէ նրա խօսքը հաստատուն և անխախտելի է։

Մեզ թւում է նոյնպէս, որ Անգլիայի տեղական ներկայացուցիչները ցանկանում են այս քաղաքականութիւնը վարել։ Սակայն, դժբախտաբար, նրանք զանազան տեղ զանազան ուժերի վրայ են յենւում, որոնց միջև գոյութիւն ունի անխուսափելի հակառակութիւն։

Եւ այստեղ ծնւում է անիշխանութեան և մշտական ընդհարման անխուսափելիութիւնը։

Կարելի է մի բան էլ մտածել, որ Անգլիան ցանկանում է այս ուժերի հակառակութեան վրայ հիմնել իր քաղաքականութիւնը, և բոլոր ուժերի միմեանց դէմ հանելու մէջ գտնել իր տիրապետութեան աղբիւրը։

Եւ այս վերջին կարծիքը ճշմարտութեանը մօտ կը լինի, եթէ ի նկատի կ'առնենք այն հանգամանքը, որ անգլիական զօրքը փաստօրէն չի երեւում այնտեղ, որտեղ կոնֆլիկտ կայ, և շատ է երեւում նա այնտեղ, որտեղ կոնֆլիկտը անկարելի է։

Յամենայն դէպս մի բան անկասկած է, որ արտաքին գործերի մինիստրութիւնը պիտի մեզ վերջնականապէս իմաց տայ Անգլիայի այստեղ գալու նպատակը։ Դեմոկրատիան միշտ էլ աւելի վստահութեամբ է վերաբերուել Անգլիայի դեմոկրատական հասարակարգին, քան Գերմանիայի կիսաաբսոլիւտական կայսրին։ Նա մինչև անգամ տենչում էր այն ազատութեան մասին, որ ունի Անգլիայի քաղաքացին իր հայրենիքում։ Այսու հասկանալի է, որ Անգլիայի գալուն նա վստահութեամբ ընդառաջ գնաց։ Միայն այս վստահութիւնը հետզհետէ կանյայտանայ, եթէ այն սև հարիւրակային կռւին, որի դադարումն անգլիական ներկայացուցիչները խոստանում են, վերջ չը լինի։

Մենք հակառակ չենք անգլիացիների գալուն մեզ մօտ—ոչ էլ Անգլիայի տնտեսական շահերը վախեցնում են մեզ մեր երկրում։ Ընդհակառակն՝ բաւականութեամբ կընդունէինք օտար արդիւնաբերող ուժին, որը մեր երկրի անհամար բնական հարստութիւնները կը մշակէր։ Այս բանում պատշաճ քայլեր անելը անմիջապէս պէտք է։ Միայն դեմոկրատիան չի հաշտուի նրա իրաւունքների ոտնատակ տալու հետ, չի հաշտուի մեր արիւնով հաստատուած կարգերի խորտակման հետ սև հարիւրականների կողմից, և եթէ նրանք Անգլիայի անունով էլ գործելիս լինեն, նա հարկաւոր ընդդիմադրութիւն ցոյց կը տայ։ Դեմոկրատիային կը պատի ուժ իրեն պաշտպանելու և հաստատելու այն, որ նա արժանաւոր զաւակ է իր հանրապետութեան։ Եւ նա այս կը հաստատէ էլ»։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏ.

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

«Ազգային խայտառակութիւն».— Դ. Դէմիրճեանի կոմեդիայի այս վերնագիրը թող պերճախօս պատասխանը լինի նրա թէ ներքին և թէ արտաքին արժանիքների համար։

Իսկապէս. երկուշաբթի, ամսիս 10-ի երեկոն ոչ խայտառակութիւնն էր ազգի՝ որպէս ողորմելի, խարդախ, թիւր ու տհաս գործիչների հաւաքածուի, այլ և ազգի, որպէս գրականութեան, այն էլ դրամատիկ գրականութեան, սխալ հասկացողութեան, էսթետիզմի աղաւաղման ու գեղարուեստի բռնաբարման կոլեկտիվի։

Դ. Դէմիրճեանը ըստ երևոյթին կամեցել է իր կոմեդիայով խարազանել հայ գործիչների պակասաւոր կողմերը, և դրա համար ինչ միջոցների ասէք, որ չի դիմել. տնտեսական շուկայում, բազարում անշուշտ գոյութիւն ունի սպեկուլեացիա, բայց հայ գրական-խմբագրական ասպարէզում այդպիսի արատ, խաբեբայութիւն տակաւին չի յայտնագործուել, այն էլ այնպիսի հսկայական չափերով, որ անխտրականօրէն տարածւում է բոլոր գործիչների վրայ, սկսած նախագահից ու խմբագրից մինչև վերջին լրատուն ու գրագիրը (այստեղ բացառութիւն չի կազմելու երևի նաև հեղինակը)։

Սակայն այս չէ միայն ցաւոտ անկիւնը, այլ սա «ազգային» մասն է. գանք գրականին։

Կոմեդիայի սկզբից մինչև վերջը չկայ ոչ մի կապ, շղթայ—անբովանդակ է իր ամբողջ էութեամբ. այնպէս որ՝ եթէ բոլոր գործողութիւնները խառնենք իրար, դասաւորենք ըստ ցանկութեան յետ ու առաջ, դրանով ոչինչ կորցրած չենք լինի. այնուհետև շատ հասկանալի է այս թատրերգի գրական-գեղարուեստական արժէքը։

Ճիշտ է, տեղ-տեղ կան յատուկ շտրիխներ, որ շնորհալի մի ձիրք են արտայայտում, սակայն տեղ-տեղն է միայն Դէմիրճեանի մենաշնորհը, իսկ ընդհանուրում պարտուած է և անգոյն։

Յաջողուած մասեր ունեն Մըմըռուհու (Ամօ-Խարազեան) և տիկ. Մարոյի (Գուլազեան) տիպերը, բայց այնքան են գունատ ու երբեմն բոլորովին անտեղի, որ չեն թողնում ոչ մի կենդանի հետք, իսկ ինչ էլ որ ստացուեց՝ պէտք է դերակատարների ջանքերին վերագրել։

Տիկ. Զաքարեանին շունչ տուեց Յասմիկ և այնքան զարգացրեց, որ նոյն իսկ դառաւ կենսունակ ու հաճելի։

Մանըէկէնային էին՝ Ոչաունի (Խաչատրեան), Մ.-Շահնազարեան (տիկ. Դովլաթեան). իսկ Ալլահվերդեան՝ քափ-քրտինք կորուց Պատրիկեանին կենդանութիւն տալու համար։

Մէզալեանի (Ալիխանեան) և Թաթուլեանի (Աւետեան) տիպերը ստեղծուած են միմիայն ծիծաղ պատճառելու համար, չնայած որ՝ այս տեսակէտից ոչ մի բացառութիւն չէր կազմում, թէպէտ առանց նոյն իսկ այս նպատակին հասնելու։

Հեղինակը ոչ միայն ծիծաղի ու կոմիզմի տակ չի դրել սուր միտք, ինչպէս յատուկ է, օրինակ, Յ. Պարոնեանին, այլ և այս ծիծաղը չի հիմնուած առողջ ջղերի վրայ. շարժը, կարիկատուրան հասնում է ծայրայեղութեան, որ ամեն քայլափոխում դիտողի մէջ հարց են յարուցում, թէ «ինչի»...

Միանգամայն աւելորդ են Գոտան (Սանամեան) և Մարուսեան (Կարախանեան), իսկ պ. Զարբեխանը (Բերոյեան) և Զանգուզագովը (Միրզոյեան) ամենևին չեն պարզաբանւում։

Այսպիսով «Ազգային խայտառակութիւնը» պէտք է նկատել որպէս գրական խայտառակութիւն, և ուրիշ ոչինչ։

Ամբողջ թատրաշրջանում նոր ինքնուրոյն ոչ մի թատրերգ չբեմադրելով հասարակութիւնը ծայրէ ի ծայր լցրել էր թատրոնն՝ իր սեփականութիւնը ողջունելու։ Չնայած տեղերի գների բարձրացմանը՝ այնուամենայնիւ սրահում զգալի էր առանձին ոգևորութիւն ու համակրանք։

Ուրախութեամբ ենք ընդգծում, որ մեր հասարակութիւնն արդէն պատրաստ է աչք բանալու իր ինքնուրոյն ստեղծագործութիւնների առաջ. միայն հարկաւոր է այդ ցանկութիւններին հանդիպել աւելի առողջ պայմաններով և աւելի բարձր հանգամանքներում։

Փոյթ չէ, թէ երբեմն էլ մէկ կամ միւս կողմը պարտուի. քննադատութիւնը սակայն իր անկեղծութիւնը պէտք է պահպանի։

Գ—Է

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ"-Ի
գրասենեակում վաճառւում է նրա հրատարակութեամբ լոյս տեսած
ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
■ ■ ՁԵՄՍՏՒՈՆ ■ ■
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ԳԻՐՔԸ
Գինը 50 կոպէկ։
Դիմել գրասենեակ՝ Головинскій пр. № 25. 0—19

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՍԵՐԱԿԱՆ
ԴՊՐՈՑ
ԵՒ
ՍՈՒՍԵՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՃՈՒՍ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Հայերի մէջ առևտրական կրթութիւն տարածող Կովկասեան ընկերութեան։
Նիկոլայեւսկի № 36։ ✦ Կիսամեայ դպրոցի վճարը 75 ռուբ. ✦ Ուսանողների 25 տոկ. ձրի է։ 0—30

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արևմ. Խորհրդի Եկատերինոդարի խորհրդակցութեան [illegible] անդամներէն մէկ քանին Կովկաս գալով, պաշտօն ունէին գլխաւորապէս պատրաստելու Ապահովութեան և Արևմ. Խորհուրդներու ընդհանուր հաշիւները և ներկայացնելու գումարելիք Բարձրագոյն Մարմնին։

Կովկաս գալով՝ անմիջապէս ձեռնարկուած էր հաշիւներու պատրաստութեան, բայց դժբախտաբար քաղաքական բարդութիւնները և տիրող փափուկ դրութիւնը անհնար դարձուց աշխատութիւններու աւարտումը։

Քանի, որ նոյն պատճառներով և անոր հետեւանքներով թերևս Բարձրագոյն Մարմնի գումարումն ևս յապաղի, անհրաժեշտ համարուեցաւ հրատարակութեան տալ գոնէ կատարուած աշխատութիւնը, այն է՝ Ապահ. Խորհրդի եռամսեայ հաշիւը (յունուար—մարտ)։ Մենք անկախ ներկայ արգելքները վերանալէ յետոյ աշխատութիւններբ պիտի աւարտին և ներկայացուին Բարձրագոյն Մարմնին և հրատարակութեան տրուին։

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ՄԱՅՐ ՏՈՄԱՐԻ

Արևմտահայ Խորհրդի կրթական բաժնի 1918 թ. մայիս 21

Թուահամ. մայր տոմ.	ՀԱՇԻՒ	Պարտք	Պահանջ	ՄՆԱՑՈՐԴ Պարտք	ՄՆԱՑՈՐԴ Պահանջ
5	Սնդուկ	1013619 59	1013120 97	498 62	— —
13	Կեդրոն. (կրթակ.)	14747 89	150 —	14597 89	— —
20	Թիֆլիսի շրջան	105997 02	1894 15	104102 87	— —
24	Ջնդն. պարտակ.	50782 89	41005 79	9777 10	— —
34	Բիւրօ	451780 80	978805 20	— —	527024 40
41	Երևան (կրթ.)	220902 49	— —	220902 49	— —
51	Կարս	25241 50	870 —	24371 50	— —
61	Ալէքսանդրապոլ	37768 50	10000 —	27768 50	— —
71	Երևան (որբ.)	166036 30	5287 10	160749 20	— —
81	Աւանս	234539 80	234539 90	— —	— —
91	Զանազան ծախսեր	12925 31	335 —	12590 31	— —
100	Կարասիք	2929 70	— —	2929 70	— —
110	Պահեստ	39590 68	999 65	38591 03	— —
120	Բաքու	5280 —	— —	5280 —	— —
130	Յ. Տէր-Զաքարեան	14130 —	— —	14130 —	— —
135	Կարնոյ շրջան	10673 32	52 08	10621 24	— —
138	Խնուսի »	2000 —	— —	2000 —	— —
140	Գայլալիտի շրջան	4151 33	200 —	3951 33	— —
141	Սալմաստ—Դիլման	8000 —	— —	8000 —	— —
142	Սանեբ	13235 60	65 —	13170 60	— —
143	Վան	12000 —	— —	12000 —	— —
144	Փ. Գլխ. Խորհուրդ	— —	222528 —	— —	222528 —
145	Բագրևանդ	10900 —	— —	10900 —	— —
146	Արտամուջ	4700 —	— —	4700 —	— —
147	Արդահան	2370 —	— —	2370 —	— —
156	Լիքվիտասիոն	40130 02	— —	40130 02	— —
161	Ախլցխա	1160 —	— —	1160 —	— —
163	Ախալքալաք	1260 —	— —	1260 —	— —
148	Դիադին	3000 —	— —	3000 —	— —
		2509852 84	2509852 84	749552 40	749552 40

22 մայիս 1918 Թիֆլիս
Հաշուապահ՝ Ս. Խանենեան
Դիւան Արևմ. Խորհրդի Նախագահ՝ Վ. Փափազեան
Գործավար՝ Ա. Թէրզիբաշեան

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇԻՒ

Մայր տոմ. էջեր	ՀԱՇԻՒՆԵՐԻ ՑԱՆԿ	Շրջանառութիւն յունուար, փետր. և մարտ ամիսների 1918 Դեբետ	Շրջանառութիւն յունուար, փետր. և մարտ ամիսների 1918 Կրեդիտ	Valdo Մացորդ առ 1-ն ապրիլի 1918 Դեբետ	Valdo Մացորդ առ 1-ն ապրիլի 1918 Կրեդիտ
1	Գեներալ կոմիսար նուաճած վայրերի	— —	1245000 —	— —	1245000 —
10	Դրամարկղ	1806931 55	1592004 82	214926 73	— —
20	Աւանս*)	1290342 99	178185 06	1112157 93	— —
30	Զանազ. անձանց և հիմնարկութիւն.	177814 97	261782 32	— —	83967 35
40	Նուիրատուութիւն.	— —	3743 20	— —	3743 20
50	Դիւանական	2718 65	— —	2718 65	— —
60	Տպագրական	2748 50	— —	2748 50	— —
70	Ռոճիկ	19030 33	— —	19030 33	— —
80	Փոստ և հեռագիր	44 16	— —	44 16	— —
90	Լուսաւորութիւն, տաքութիւն և մաքրութ.	2183 50	— —	2183 50	— —
100	Զանազ. մանր ծախս.	1946 50	— —	1946 50	— —
110	Երթևեկութիւն	4338 16	— —	4338 16	— —
120	Փոխադրավարձ**)	71551 —	— —	71551 —	— —
130	Շարժական կայք	1476 —	— —	1486 —	— —
140	Թիֆլ. պահ. գնդի հ.	566 25	— —	566 25	— —
150	Աւտոմոբիլ և գարաժ	3093 —	— —	3093 —	— —
160	Վաճառակ. բանկ	— —	362824 —	— —	362824 —
170	Նպաստ	1600 —	— —	1600 —	— —
180	Ռազմամթերք	33200 —	— —	33200 92	— —
190	Օրապահիկ	1077 92	— —	1077 —	— —
200	Հանդերձային ենթասպաների	20200 —	— —	20200 —	— —
210	Սննդադրամ զին.	3225 50	— —	3225 50	— —
220	Երկրապահ զօրամաս	198640 42	— —	198640 42	— —
230	Զօրահաւաք	800	— —	800 —	— —
		3543539 40	3543539 40	1695534 55	1695534 55

Ապահովութեան Խորհրդի Նախագահ՝ Վ. Փափազեան
Գործավար՝ Ա. Թէրզիբաշեան
Հաշուապահ՝ Մ. Սամուէլեան
Գանձապահ՝ Ն. Տօնապետեան

Մայիսի 22-ին գանձարանում եղել է 596,108 ռ. 88 կ., որից ուղարկուած է Ռուսահայ Ազգ. Խորհրդին 370,000 ռ. յանձնելու համար 100,000 ռ. Անդրանիկին (ասկէ 15 օր առաջ դարձեալ 100,000 ռ. յանձնուած է նրանց նոյն նպատակով.

100,000 ռ. Երևանի Ապահ. Խորհրդին՝ զինուորներու ընտանիքներու համար. 50,000 ռ. Երևանի Որբ. Խորհրդի որբանոցին։

120,000 ռ. անձեռնմխելի պահել երկրապահ զօրամասի լիկվիդացիայի և ինվալիդ-սպանուած զինուորների ընտանիքներուն բաշխելու։

Մօտ 180,000 ռ. Հիւս. Կովկասում փոխարինաբար տրուած է Ամերիկ. Նպաստ. Ընկերութեան փախստական կարիքների համար.

25,000 ռ. Համառ. Փախս. Կոմիտէի լիազօրին փոխարինաբար, իսկ մնացեալ ընթացիկ ծախքեր։

Հաղորդելով այս թուցիկ տեղեկութիւնները մայիս 22-էն յետոյ կատարուած ծախքերի մասին, մօտիկ ապագային կը վերապահենք հաշուետուութիւնը։

Արևմ. Խորհրդի Նախագահ՝ Վ. Փափազեան
Գործ. Ա. Թէրզիբաշեան
Իսկականին համապատասխան է. կը հաստատեմ՝ Արևմտ. Խորհրդի անդամ՝ Հ. Գալիկեան
10 փետր. 1919, Թիֆլիս.

---

*) Գլխաւորապէս զինուորներու ընտանիքներուն տրուած, որ կը կոչուի «Խնամատարական» ճիւղ։

**) Բանակի բազմատեսակ պիտոյքներու փոխադրութիւն։

Տպարան «Մամուլ»—կազմ. Մ. Եփրիկեան և Յ. Մայիլեան, Լորիս-Մելիքեան փող., № 22.